**Կայացավ քաղաքացիների 2016 թվականի ապրիլ ամսվա ընդունելությունը**

11.04.2016



2016 թվականի ապրիլի 8-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մոտ տեղի ունեցավ քաղաքացիների հերթական ընդունելությունը:

Ընդունելության համար ցուցակագրվել էր 102 քաղաքացի, ընդունելության էին եկել 97-ը: Ընդունելության եկած 96 քաղաքացիներ դիմել էին դրամական աջակցության խնդրանքով, որոնց խնդրանքը բավարարվեց:

Մեկ քաղաքացի դիմել էր աշխատանքի տեղավորման հարցով: Նշված քաղաքացու հարցին լուծում տալու նպատակով մարզպետը հանձնարարություն տրվեց մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման ղեկավարին՝ ուսումնասիրել և օրենքով սահմանված կարգով պատասխանել քաղաքացուն: